## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-238-20.04.2022-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-238[1]-20.04.2022-ՊԻ-011/0) ԵՎ «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-238[2]-20.04.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ Կառավարություն | **«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր** | Առաջարկվում է Նախագծերի փաթեթից հանել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը:<br>Այս համատեքստում հարկ է նշել, որ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է Քրեակատարողական նոր օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով արդեն իսկ լուծվել են նախագծերով բարձրացվող՝ բժշկական հանձնաժողովների գործունեության կարգին առնչվող լիազորող նորմերի հարցերը: Նշված օրենսգիրքն ու | Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքը հուլիսից 1-ից արդեն ուժի մեջ են մտել:<br>Բացի այդ, հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել նաև Քրեական դատավարության նոր օրենսգիրքը: Հետևապես, արդեն ուժը կորցրած ճանաչված օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:<br>Ուստի, առաջարկվում է Նախագծերի փաթեթից հանել այդ երկու նախագծերը և շրջանառության մեջ թողնել միայն «Պրոբացիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը: | | |